ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
07806692

հեռ. /0267/ 2-25-89 Ֆաքս ,fax /0267/ 2-25-89 E-mail: berdmedikal@yandex.com
ՀՀ Տավուշի մարզ ք.Բերդ Ա.Մանուկյան 25

05 սեպտեմբերի 2024թ" 360

Որոշում
N ԲԲԿ-2024/5
"Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **«ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/13»**

Մասնակից՝ **"Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ**
/ ՀՎՀՀ՝ 00498192, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ փ. 63/23 /

1. Հիմնավորում և եզրահանգում

16.08.2024թ.-ին «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը ՀՀ ՖՆ -ից ստացել է գրություն, որով բացահայտվել է, որ «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և ... ՍՊԸ-ները:»

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

26.08.2024թ.-ին «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը միակողմանի լուծել է «Էսզեթ ֆարմ» ՍՊԸ-ի հետ 06.06.2024թ.-ին կնքած ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/13-3 ծածկագրով պայմանագիրը, սակայն մինչ օրս «Էսզեթ ֆարմ» ՍՊ ընկերության կողմից չեն վճարվել պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Ընթացակարգի հրավերի մաս 1-ի 8.14 կետի համաձայն «Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«Էսզեթ ֆարմ» **ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Բերդի ԲԿ» ՓԲԸ տնօրեն՝ Ա. Մարդանյան